Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՄԿՐՏԻՉ ԱՅՎԱԶՅԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Մկրտիչ Այվազյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, դեկտեմբերի 18-ից 20-ը, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մշակույթի բնագավառում Հայաստանի և Ռուսաստանի միջև 2-րդ կրթական համաժողովին մասնակցություն

6. Քննարկված թեմաները

- կրթության դերը զարգացման ազգային նպատակներին հասնելու գործընթացում,
- որակյալ կրթության հասանելիության ապահովման միջոցով կրթական միջավայրի կատարելագործում,
- մշակույթի ոլորտի կրթության ուղղությամբ ՀՀ-ՌԴ համագործակցության զարգացում,
- մշակույթի ոլորտի բուհերում նոր տեխնոլոգիաների և նորարարությունների ներմուծում:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Համաժողովի բացմանը Մ.Այվազյանը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության անունից հանդես եկավ ողջույնի խոսքով: Համաժողովի շրջանակում քննարկվեցին մշակույթի ոլորտում երկու երկրների միջև համագործակցային կապերի ընդլայնման, կրթական միջավայրի բարելավման, կադրերի վերապատրաստման, բուհերում տեխնոլոգիաների ու նորարարությունների ներդրմանն առնչվող հարցեր: Համաժողովին զեկուցումներով հանդես եկան.

- Մշակույթի Մոսկվայի պետական ինստիտուտի ռեկտոր՝ Եկատերինա Կուդրինան,
- Հայ-ռուսական համալսարանի մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտի տնօրեն՝ Կարեն Մարգարյանը,
- Կրթության և գիտության ռուսաստանյան կենտրոնի (Ռոսսոտրուդնիչեստվո) բարձրագույն կրթության և գիտության բաժնի ղեկավարի տեղակալ՝ Ալեքսանդրա Խլեվնան,
- Թատերական արվեստի Ռուսաստանյան ինստիտուտի միջազգային կապերի բաժնի ղեկավար՝ Նատալիա Պլյուսնինան,
- Հայ-ռուսական համալսարանի «ԲԵՄ» թատրոնի գեղարվեստական ղեկավար՝ Սոնա Մարգարյանը,
- Մ.Ռումյանցեվի անվան կրկեսային և էստրադային արվեստի պետական ուսումնարանի ուսումնադաստիարակչական գծով փոխտնօրեն՝ Նատալիյա Վոլնուխինան:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի շրջանակում որոշումներ, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել: Փաստաթղթեր չեն ստորագրվել:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Շարունակել աշխատանքային շփումները բարձրացված հարցերի շուրջ հետագա քննարկումներն ապահովելու համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Մկրտիչ Այվազյան

24.12.2024թ.